Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվ. միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Խոսքի մասերի ուսուցումը երկհամակազմ դասարաններում

Վերապատրաստող, մենթոր՝ Մկրտչյան Մելիք

Ուսուցիչ՝ Սեդրակյան Սեդա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն…….3
Խոսքի մասերի ուսուցումը երկհամակազմ դասարաններում …….4
Եզրակացություն……..13
Օգտագործված գրականության ցանկ…….14

Ներածություն

Մարդն իր գործունեության ընթացքում կենցաղային, հոգեկան պահանջների բավարարման համար միշտ մտքերի հաղորդման կարիք ունի: Այդ մտքերը կարող են վերաբերվել առարկաների, անձանց, երևույթների, գործողությունների, այն ամենին, ինչ գոյություն ունի աշխարհում: Եվ այդ բոլորն անվանում ենք բառերով՝ խոսքով: Խոսքը կազմվում է նախադասություններից, իսկ նախադասություն կազմելու համար բառերն անպայման ենթարկում ենք որոշակի ձևափոխության՝ բառերի միջև կապ ստեղծելով: Եթե չլիներ այդպես, չէինք կարողանա իմաստավորված մտքեր արտահայտել և չէինք ունենա, դիցուք, «Հայաստան ասելիս հասակս ծաղկում է » խոսուն միտքը, եթե միայն իրար հետևից շարեինք Հայաստան, ասել, հասակ, ծաղկել բառախումբը:

Բառերի ձևափոխությունները կատարվում են որոշակի կանոնների համաձայն. գոյականներն ունեն հոլովման կանոններ, բայը խոնարհման և այլն: Բառերի ձևափոխությունների կանոնների ամբողջությունը կոչվում է ձևաբանություն[1]:

Լեզվի բոլոր բառերն իրենց արտահայտած իմաստների համաձայն բաժանվում են տարբեր խմբերի կամ տեսակների՝ առարկա ցույց տվող բառերը մի խումբ են կազմում, գործողություն ցույց տվող բառերը մի խումբ, գործողության հատկանիշ ցույց տվողները՝ մեկ այլ խումբ: Այդ տարբեր խմբերն ու տեսակները կոչվում են խոսքի մասեր:

Սույն աշխատության նպատակն էլ այդ խոսքի մասերի տարբերակումն ու ուսուցումն է ժամանակակից մեթոդների համակցմամբ:

Խոսքի մասերը հատուկ են աշխարհի բոլոր լեզուներին, բայց, պայմանավորված լեզվի՝ հիմնականում կառուցվածքային տիպով, տարբեր է նրանց որոշման հիմունքը, ուրեմն և քանակը:

Խոսքի մասերի ուսումնասիրությունը բավականին խոր արմատներ ունի. այն դիտարկված է հայ և արտերկրյա մանկավարժ- մեթոդիստների աշխատանքներում՝ Դ. Թրակացի, Գ. Մագիստրոս, Վ. Արևելացի, Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Մ. Աբեղյան, Ս. Պալասանյան, Ա. Այտնյան, Ա. Ղարիբյան, Թ. Ջուհարյան, Ջ. Գյուլամիրյան, Գ. Սևակ և ուրիշներ:

Ձևական քերականությունը որպես տարբերակման միջոց ընտրել է բառերի ձևը, ձևական հատկանիշները (Պեշկովսկի, Ուշակով) կամ համատեղել դրանց ձևն ու արտահայտած իմաստը (Մ. Աբեղյան): Ըստ լեզվաբան Գուրգեն Սևակի՝ խոսքի մասերը ինչպես և մյուս լեզվական կատեգորիաները, ունեն նաև իմացականական արժեք և արտացոլում են մարդու մտածողության զարգացումը՝ աստիճանական առաջընթացի ժամանակ իմացության և լեզվի հարստացման ճանապարհին[2]:

Աճառյանի կարծիքով, եթե խոսքի մասը փոխում է իր գործածությունը, ապա փոխում է նաև խոսքի մասը (օրինակ՝ թագավոր, հույն) : Նա նաև բերում է այլ օրինակներ, թե ինչպես են արտահայտությունները, բառակապակցությունները դառնում լեզվական մեկ միավոր և սկսում կիրառվել որպես անուն խոսքի մաս (ասեկոսե, Հայսմավուրք) :

---

[1] Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7, Եր. 2011 էջ 13 :

[2] Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009: ԵՊՀ հրատ., էջ 213-214 :

Մանվել Ասատրյանը տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար, հաշվի է առնում հետևյալ տվյալները.

1. բառի ընդհանուր իմաստ,
2. բառի ձևավորումն ու ձևաբանական առանձնահատկությունները,
3. բառի շարահյուսական կիրառությունները[3]:

Հայերենում խոսքիմասային իմաստները հատուկ մասնիկների միջոցով չեն արտահատվում, և բառերը առանց հատուկ ձևավորման,ըստ իրենց ընդհանուր իմաստի և ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների, մտնում են այս կամ այն խոսքի մասի մեջ:

Ըստ արդի լեզվաբանության ընդունված հայեցակարգի՝ հայերենի խոսքի մասերը տասն են՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն, որոնք որոշվում են համապատասխան բառախմբերի ընդհանուր նշանակությամբ:

Խոսքի մասերի ուսուցումը երկհամակազմ դասարաններում
Հետազոտական համատեքստ

Միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր կրթական աստիճանի (տարրական, միջին,ավագ) ավարտողը պետք է տիրապետի հայոց լեզվի հնչյունական, ձևաբանական և շարահյուսական համակարգերի հիմնական հատկանիշներին, կարողանա դրանք տարբերակել խոսքում, ինչպես նաև ազատ արտահայտի մտքերը: Ցանկացած թեմա ուսուցանելիս, ցանկալի արդյունք ապահովելու համար, պետք է կատարել մեթոդների, եղանակների, հնարների ճիշտ ընտրություն:

Հետազոտության նպատակն է մշակել և ուսումնասիրություններով հիմնավորել ձևաբանական գիտելիքների ուսուցման ժամանակակից արդյունավետ մեթոդական համակարգը:

Ձևաբանական գիտելիքների ուսուցումը սկսվում է տարրական դպրոցից. ներկա կրթական համակարգում սկսվում է երրորդ դասարանից: Խորացված ուսուցումն սկսվում է յոթերորդ դասարանում, ամրապնդվում և ի մի է բերվում ավագ դպրոցում: Աշխատության նպատակն է առաջադրվող մեթոդաբանությամբ փորձ անել ավելի դյուրին դարձնել ձևաբանական գիտելիքների ընկալումն ու ամրապնդումն ավագ դպրոցում, նպաստել նրանց խոսքի մշակույթի հարստացմանը:

Հետազոտության օբյեկտը «Խոսքի մասերի ուսուցումն է երկհամակազմ դասարաննում», որն իրականացրել ենք միջին և ավագ դասարաններում:

Հետազոտական աշխատանքին մասնակցել են VII –VIII, X- XI երկհամակազմ դասարանների սովորողները: Աշխատանքում տեղ գտած խնդիրներն են՝

• ուսումնասիրել միջին դպրոցականների բառապաշարի շերտերը, որոշել նրանց խոսքում ձևաբանական գիտելիքների կիրառման մակարդակները,

[3] Մ. Ասատրյան: Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր: Եր. 1970, էջ 71:

•ուսումնասիրել ավագ դպրոցականների բառապաշարի շերտերը, որոշել նրանց խոսքում ձևաբանական գիտելիքների կիրառման մակարդակները,

• մշակել և փորձարկել ձևաբանական գիտելիքների արդյունավետ յուրացմանը նպաստող մեթոդական նոր համակարգ և վերլուծել արդյունքները
• հիմնավորել ընթերցանության նյութերի միջոցով ձևաբանական գիտելիքների՝ գործնական ճանապարհով ուսումնասիրման արդյունավետությունը մտահաղորդակցական կարողությունների զարգացման առումով,

• վերլուծել միջին և ավագ դպրոցի սովորողների՝ հայոց լեզվի առարկայական չափորոշչով նախատեսված կարողությունների և հմտությունների ստուգման հնարավորությունները ստուգատեսի շրջանակներում:

Աշխատանքում ներկայացրել ենք խոսքի մասերի ուսուցման ձևեր, վարժությունների համակարգ: Ներկայացրել ենք մեթոդներ, որոնցով սովորողները կկարողանան
• հարստացնել բառապաշարը,
• համագործակցել ընկերների հետ,
• փաստարկված պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը,
• կատարել ձևաբանական վերլուծություն
•կազմել գրագետ խոսք
•ճանաչել խոսքի մասերի քերականական հատկանիշները, տարբերակել և կիրառել խոսքում:
Ուսումնասիրության ընթացքում կարևորել ենք յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները:
Տասնամյակների ընթացքում արևելահայերենի ձևաբանության նորմերը կրել են որոշակի փոփոխություններ. լեզուն կենդանի օրգանիզմ է և անընդհատ ենթակա է փոփոխությունների ու տեղաշարժերի: Լեզվի ձևաբանական համակարգը այդ փոփոխությունների ուղղակի կրողն է՝ մյուս մակարդակների համեմատության մեջ առավել կամ պակաս չափով: Ձևաբանական նորմի վրա էականորեն կարող են ազդել մի կողմից խոսակցական լեզվի տարածվող ձևաբանական իրողությունները, մյուս կողմից՝ արդեն գործածության մեջ եղած իրողությունների իմաստափոխությունները:
Հետազոտական աշխատանքն իրականացնելիս կարևորել ենք ոչ թե քերականական կանոնները, սահմանումները, հոլովման ու խոնարհման հարացույցներն անգիր անելը, այլ հիմնվելով այդ կանոնների վրա՝ հասնել նրան, որ սովորողը բնագրի վրա աշխատելիս կարողանա առանձնացնել նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերը, բացատրի, հիմնավորի նախադասության մեջ բառի ձևափոխության անհրաժեշտությունն ու նշանակությունը:
Կարևոր է յուրաքանչյուր սովորողի գիտակցությանը հասցնել այն, որ հայոց լեզվի ուսուցումը սոսկ կանոնների քերականական սերտումը չէ: Երբեմն լեզուն համեմատում են մաթեմատիկայի հետ. երկուսն էլ պահանջում են վերլուծական, տրամաբանական մտածողություն: Հետևողականորեն պետք է հասնել նրան, որ սովորողն ինքը հասկանա տվյալ նյութը և կատարի առաջարկվող առաջադրանքը: Ցանկացած նոր նյութ բխում է նախորդից: Եթե չհասկանա գոյական անունը, չի կարողանա

տարբերակել առարկայի հատկանիշ ցույց տվող բառը կամ չյուրացնելով բայը, չի կարողանա տարբերակել ստորոգյալը կամ գործողության հատկանիշ ցույց տվող խոսքի մասը:

Սովորողը ոչ միայն լեզվական գիտելիքներ պիտի ունենա, այլև կարողություն, հմտություն՝ այդ գիտելիքներն ամենօրյա խոսքում օգտագործելու համար:

Գործնական համատեքստ

Լեզվի ուսուցման հիմքում տեսականն ու գործնականը պետք է շաղկապված լինեն, միահյուսված այնպես, որ տեսական նյութի յուրացումն անպայմանորեն կատարվի գործնական աշխատանքների միջոցով: **Ո՞ւմ է հարկավոր այն տեսական գիտելիքը, որը չունի գործնական կիրառում[4]:**

Աշխատանքը կազմակերպել և իրականացրել ենք հետևյալ տրամաբանությամբ. քանի որ հետազոտությունն իրականացվում է բազմահամակազմ դասարաններում, դա մեզ թույլ կտա ավելի լավ հասկանալ՝ տարիքային որ խումբն է ավելի լավ ըմբռնում և յուրացնում թեման և առավելապես խոսքի մասերի որ խումբն է ավելի հեշտ « մարսվում » սովորողների կողմից :

Նախատեսել ենք հետազոտությունն անցկացնել VII- VIII, X – XI երկհամակազմ դասարաններում:

«Թվականը որպես խոսքի մաս» թեմայի ուսուցումը VII դասարանում,« Շաղկապ» թեմայի ուսուցումը VIII դասարանում:

VII դասարանում սովորում են հինգ աշակերտ / 2 աղջիկ, 3 տղա/ , VIII դասարանում՝ 2 տղա, 2 աղջիկ:

Այստեղ նախատեսված քերականական նյութը մատուցվում է ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլում ուսուցիչը հարցերի միջոցով ակտիվացնում է սովորողներին՝ նպատակ ունենալով բացահայտել նրանց ձեռք բերած գիտելիքները, վեր հանել արդեն իմացածը, որպեսզի դրա վրա կառուցի նոր դասը:

Գրատախտակը բաժանում է երկու մասի:Մի կողմում գրում է Թվական անուն, մյուսում՝ Շաղկապ: Առաջարկում է գծել և լրացնել ԳՈՒՍ աղյուսակի երկու բաժինները. երրորդ սյունակը պետք է լրացնել թեմայի վերջում:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Առաջարկված աշխատանքից հետո սովորողներին բաժանվում են քարտեր, որտեղ գրված է Ռաֆֆու «Սամվել »-ից մի փոքրիկ հատված:

Գիշերային այդ տագնապալի պահին երկու ձիավորներ անցնում էին Մուշի դաշտով: Նրանք գալիս էին հեռվից , շատ հեռվից: Դրանք երկու սուրհանդակներ էին: Երկու սուրհանդակներից մեկի ձին սևագույն էր, մյուսինը՝ կապուտակ: Կապուտակ ձիավորը առաջինի ուղևորության մասին տեղեկություն ուներ, ամենայն զգուշությամբ հետևում էր նրան և երբեք յուր նկատողությունից բաց չէր թողնում: Իսկ առաջինը չգիտեր, որ իրեն հետևում են: Այդ էր պատճառը, որ նրանք, երկու մոլորակների նման,

[4] Փ. Մեյթիխանյան: Ուսուցչի ձեռնարկ, Եր. 2011, էջ 4:

թեև գնում էին միևնույն ուղղությամբ, բայց այնպիսի զուգահեռական գծերով, որ բնավ միմյանց չէին հանդիպում: Երկուսն էլ ճանաչում էին միմյանց:

VIII դասարանի սովորողներին հանձնարարվում է տեքստից դուրս գրել և խմբավորել նյութական և քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերը:

VII դասարանի սովորողները դուրս են գրում թիվ, թվային կարգ ցույց տվող բառերը:

Ուսուցիչը գծապատկերով ներկայացնում է թվականի տեսակները, կազմությունը:

Երեխաներն իրենց դուրս գրած թվականները խմբավորում են T-աձև աղյուսակով:

Քանակական	Դասական

Իմաստի ընկալման փուլում հարցադրում մեթոդով երկու խմբերը միմյանց հարցեր են ուղղում, որի միջոցով ստուգում ենք , թե ինչքանով են յուրացրել թեման:

Կշռադատման փուլ: Տրվում է հինգ րոպե ժամանակ, որի ընթացքում երկու կողմերը պետք է գրեն առած-ասացվածքներ, որտեղ կգործածվեն թվականներ և շաղկապներ: Ով ավելի շատ կգրի, կհամարվի օրվա գերազանցիկը: Վերջում լրացնում ենք ԳՈՒՍ աղյուսակի վերջին բաժինը:

Տրվում է տնային հանձնարարություն՝

1. Հայոց պատմության դասագրքից դուրս գրել թվականներ,արտահայտել տառերով:
2. Մուրացանի «Հասարակաց որդեգիրը » պատմվածքի Ա հատվածից դուրս գրել կապերն ու շաղկապները, որոշել տեսակը:

« Խոսքի մասերի ուսուցումը X-XI երկհամակազմ դասարանում »

Տասներորդ դասարանում սովորում են երեք աշակերտ՝ մեկ աղջիկ, երկու տղա, տասնմեկում երկուսն են՝ մեկ աղջիկ, մեկ տղա :

Նախ համառոտ տեղեկություն է տրվում ձևաբանության մասին՝ որպես քերականության մի բաժին, որն ուսումնասիրում է խոսքի մեջ բառերի ձևափոխության կանոնները: Բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել նրանց ընդհանուր իմաստը, փոքրիկ անդրադարձ է կատրվում խոսքիմասային խմբավորմանը:

Տուն, գիրք, գետ, ծառ, գրատախտակ և այլ բառեր, չնայած բառիմաստային տարբերություններին, իրենց արտահայտած ընդհանուր իմաստով մի խումբ են կազմում և միավորվում մի խոսքի մասի՝ գոյական անվան տակ՝ որպես առարկայական հասկացություն արտահայտող բառեր: Վերհիշում են, որ առարկա ասելով հասկանում ենք ոչ միայն նյութական իրեր, այլև՝ անձ, կենդանիներ, բնության երևույթներ, զգացմունք, եղելություն, գաղափար:

Գրել, կարդալ, խոսել, վազել և այլ բառեր, կրկին մեկ ընդհանուր իմաստ են արտահայտում՝ միավորվելով գործողություն ցույց տվող բառերի՝ բայի խմբում: Այդպես՝ մեծ, գեղեցիկ, լավ, բարձր բառերը միավորվում են ածական անվան տակ: Թվականը ցույց է տալիս առարկաների թիվը, քանակը՝ հինգ սեղան, տասը գիրք, յոթերորդ հարկ և այլն:

Դասն անցկացվում է ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ: Թվարկում են խոսքի մասերը: Ուսուցիչն առաջարկում է գծապատկերի միջոցով խմբավորել խոսքի մասերն ըստ իրենց արտահայտած իմաստի: Այստեղ ուսուցչին օգնության է գալիս մտագրոհ մեթոդը՝ ասել մտքին եկած առաջին իսկ բառը, միտքը, երևույթը: Սովորողների թվարկած բոլոր բառերը գրվուն են գրատախտակին, որից հետո առաջարկվում է բառերը խմբավորել ըստ արտահայտած իմաստի, որոշել՝ դրանցից թեքվող, չթեքվող և բուն չթեքվող խոսքի մասերը, ներկայացնել գծապատկերով: Այնուհետև տրվում է նախադասություններ, որտեղ կա սխալ բառագործածություն, խոսքի մասի ոչ ճիշտ կիրառում:

Գտի՛ր սխալը և ուղղի՛ր:

1. Ինձ մոտ ոչ մի նորություն չկա:
2. Այդ որոշման հետ բոլորը ծանոթացան:
3. Կանգնել է մայթի վրա:
4. Դասը պատասխանելուց շփոթվեց:
5. Պատերազմի արդյունքում մեր մոտ՝ հինանդանոց, Գոռ անունով մի երիտասարդի բերեցին:
6. Հանձինս Գոռի մենք ծանոթացանք մեր օրերի հերոսին:
7. Միշտ լսում էր եղբոր խորհուրդները, թեև տաս տարով մեծ էր նրանից:

Իմաստի ընկալման փուլ: Կատարվում է քարտային աշխատանք: Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունից և «Անուշ» պոեմից մի հատված ենթարկում ենք ձևաբանական վերլուծության:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սրրտի խորքից խոսք ես խոսում աստծո հետ
Ու խոսրհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին-
Հույսի՛ հայրնիք,
Լույսի՛ հայրենիք:
Է՛յ հին ծանոթներ, է՛ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա, ու միտրս ընկան,
Առաջս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չրկան: (Հ. Թ.)

Կշռադատման փուլ: Առաջարկվում է Վենի դիագրամով ցույց տալ գոյականի և բայի տարբերություններն ու ընդհանրությունները :



X և XI դասարանցիների միջև անցկացվում է մրցույթ՝ որ թիմն ավելի շատ հարցերի կպատասխանի : Որպեսզի կողմերը հավասար լինեն, սովորողներից մեկին ընտրում ենք կազմակերպիչ: Գրանցում է պատասխանները: Ամփոփում ենք արդյունքները, տալիս տնային հանձնարարություն:

1. Տրոյա, Աքիլլես, Ավգիոս, Դամոկլես հատուկ գոյականներից կազմել ածականներ, գրել այդ անուններով հայտնի դարձվածքներն ու տալ բացատրությունը:
2. Գրել շարադրություն « Հպարտ մարդը» վերնագրով:

Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանք իրականացնելիս կիրառել ենք տարբեր առաջադրանքներ, հնարներ, գծապատկերներ:

Յոթերորդ դասարանում դժվարությամբ, բայց կարողացան տարբերակել քանակական թվականի տեսակները կազմությունից. կարծում էին կցական և հարադրական բարդությունները քանակական թվականի տեսակ է: Գծագրի միջոցով թեման հասկանալի դարձավ:



Ութերորդ դասարանի սովորողներն ավելի ակտիվ են: Նրանք արդեն յուրացրել են յոթերորդ դասարանի թեմաները և առանաձնակի դժվարություն չեն ունենում իրենց ծրագրային նյութն էլ յուրացնելիս:

Հանձնարարված աշխատանքը՝ տեքստից դուրս գրել և խմբավորել նյութական և քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերը, բոլորը ճիշտ էին կատարել,

ինչ վերաբերում է առած-ասացվածքներ գրելու հանձնարարականին, առավել սիրով կատարում են նմանատիպ առաջադրանքները:

1. Ամռան արևից ինչ հասկացա, որ ձմռան արևից ինչ հասկանամ:
2. Այծը այծի համար լավ է, քան մի հոտ ոչխարը:
3. Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին:

X – XI երկհամակազմ դասարանի սովորողները հեշտությամբ դասակարգեցին խոսքի մասերն՝ ըստ արտահայտած իմաստի, առանձնացրին թեքվող, չթեքվող խոսքի մասերը:

Թեքվող	Չթեքվող	Բուն չթեքվող
Գոյական Դերանուն Բայ	Ածական Թվական	Մակբայ Կապ Աշաղկապ Վերաբերական Ձայնարկություն

«Գտի՛ր սխալը և ուղղի՛ր » առաջադրանքը կատարելիս որոշակի դժվարություն ունեցան, քանի որ այնքան տարածված է առօրյա- խոսակցական բառապաշարում այդ սխալը / պատասխանելիս- պատասխանելուց, անցնելիս- անցնելուց/, որ չեն էլ նկատում սխալը, իսկ ավելի մեծ գործոն է լատինատառ գրերով հայերեն միտք արտահայտելու տարածված տգեղ երևույթը, որը ցավալի և կործանարար դրոշմ է թողնում սերնդի՝ հայերենի իմացության վրա:

1. Դասը պատասխանելուց շփոթվեց:
2. Պատերազմի արդյունքում մեր մոտ՝ հիվանդանոց, Գոռ անունով մի երիտասարդի բերեցին:
3. Հանձինս Գոռի՝ մենք ծանոթանք մեր օրերի հերոսին:

Առաջադրանքը հասկանալու և ճիշտ կատարելու համար անդրադարձանք համակատար դերբայի կազմությանը, ճիշտ և սխալ կազմություններին, վերհիշեցինք անձնական դերանունների հոլովման առանձնահատկությունները, կազմեցինք հոլովական հարացույցը, թվարկեցինք տրական հոլով պահանջող կապերի գործածությունը՝ անձնական դերանունների դեպքում, քննարկեցինք հանձին և հանձինս կապերի գործածության տարածված սխալ կիրառությունները:

Այսպիսով հասկացան, որ պետք է լինի ոչ թե

1. Դասը պատասխանելուց շփոթվեց, այլ՝ **պատասխանելիս** շփոթվեց:
2. Պատերազմի արդյունքում մեր մոտ՝ հիվանդանոց, Գոռ անունով մի երիտասարդի բերեցին:

Պատերազի **հետևանքով մեզ** մոտ՝ հիվանդանոց, Գոռ անունով մի երիտասարդի բերեցին:

3. Հանձինս Գոռի՝ մենք ծանոթացանք մեր օրերի հերոսին:

Հանձին Գոռի՝ մենք ծանոթացանք մեր օրերի **հերոսի հետ**:

«Հայրենիքիս հետ » բանաստեղծությունը ձևաբանական վերլուծության ենթարկելիս դժվարություններ չեղան. սովորողները կարողանում են որոշել խոսքիմասային պատկանելությունը, դրանց առանձնահատկությունները:

Տի ասես աշխարհքին կապակցությունը վերլուծելիս պարզաբանվեց, որ տի-ն այստեղ փոխարինում է պիտի հարկադրական եղանակիչին: Երկրորդ և երրորդ քարտերի քառատողերից առանձնացնում ենք ձայնարկություններն ու վերաբերականները:

Ձևաբանական վերլուծություն կատարելու համար ընտրված «Հայրենիքիս հետ » բանաստեղծության հատվածն ինքնանպատակ չէր. հազարամյակներ շարունակ կանգնած ենք պետականությունն ու ինքնությունը կորցնելու վտանգի առաջ:

Յուրաքանչյուր դասի և ցանկացած առարկայի հիմքում պետք է դնել հայրենասիրության, ազգային միասնականության ու պայքարի գաղափարը: Հայրենասիրությունը որպես գերագույն արժեք պետք է սերմանել յուրաքանչյուր հայորդու հոգում՝ նրա գիտակցական կյանքի առաջին իսկ օրվանից:

Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտական աշխատանքն իրականացնելիս օգտագործեցինք տարբեր մեթոդներ՝ մտագրոհ, հարցադրում, Տ-աձև և ԳՈՒՍ աղյուսակներ, Վենի դիագրամ:

Հանձնարարվեցին տարբեր բնույթի առաջադրանքներ, վարժություններ: Ստեղծեցինք միջառարկայական կապ. կարևոր է միջառարկայական կապերի ապահովումը, քանի որ այդ տարբերակով է հնարավոր լիարժեք իրականացնել աշակերտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, ձևավորել հասարակության լիարժեք անդամ՝ հարուստ, բազմակողմանի գիտելիքներով, որոնց լիարժեք յուրացման, վերլուծության ենթարկելու և սեփականը դարձնելու շնորհիվ աշակերտները կունենան սուր և ճկուն միտք:

Հետազոտական աշխատանքն իրականացնելիս նկատեցինք, որ վարժությունների կատարման միջոցով նյութն ավելի հասկանալի է դառնում և հեշտ յուրացվում:

Երկհամակազմ դասարաններում աշախատանքը կրկնակի դժվարության և պատասխանատվության առաջ է կանգնեցնում ուսուցչին: Եվ հենց այստեղ պետք է դրսևորվի ուսուցչի մանկավարժական ձիրքը, հնարամտությունը, որպեսզի ճիշտ պլնավորի ժամանկը և կարողանա բոլորին ներգրավել դասապրոցեսի մեջ, սովորողի մոտ հետաքրքրություն առաջացնի ուսման նկատմամբ:

Ուսուցիչը պետք է սատար կանգնի և քաջալերի սովորողին ամենափոքրիկ հաջողության համար անգամ, որ միասնական քայլերով ընթանան առաջ՝ հասնելով ցանկալի վերջնարդյունքի: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը, ինչպես կմատուցվի նոր դասը և ամենակարևորը՝ հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները:

Ուսումնասիրեցինք միջին և ավագ դպրոցականների բառապաշարի շերտերը, որոշեցինք նրանց խոսքում ձևաբանական գիտելիքների կիրառման մակարդակները:

Փորձարկեցինք ձևաաբանական գիտելիքների արդյունավետ յուրացմանը նպաստող մեթոդական նոր համակարգը:

Պարզեցինք միջին և ավագ դպրոցի սովորողների՝ հայոց լեզվի առարկայական չափորոշչով նախատեսված կարողությունների և հմտությունների համապատասխանությունը:

Եզրակացություն

Հետազոտական արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Սովորողները կարողանում են որոշել բառի խոսքիմասային պատկանելությունը:
2. Յոթերորդ դասարանում խոսքի մասերն ուսուցանելիս պետք է ավելի շատ խաղային վարժություններ կիրառել:
3. Սովորողների մոտ առավել մեծ հետաքրքրություն առաջացնելու համար պետք է օգտագործենք տարբեր նոր մեթոդներ, որոնց շնորհիվ ավելի հեշտ և հաճելի է թեման ուսումնասիրելը :
4. Ձեռնպահ մնալ քերականական նյութը սահմանումներով ողողելուց:
5. Ավագ դպրոցում ավելի շատ ուշադրություն դարձնել սովորողի բանավոր խոսքին (արտահայտեն մտքեր՝ խուսափելով բառագործածության, ձևաբանական և շարահյուսական սխալներից):
6. Դիդակտիկ պարագաներ շատ օգտագործել՝ տեսողական հիշողությունն այդ տարիքում ավելի զարգացած է:
7. Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերն ուսուցանելիս հատուկ ուշադրություն դարձնել կապերի հոլովառությանն ու կիրառության ճիշտ ձևերին:
8. Ուսուցման մեթոդներն ընտրելիս ուշադրություն դարձնել սովորողների հոգեբանական, անհատական և տարիքային առանձնահատկությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Եր. 1970
2. Բարսեղյան Հովհ., Փ. Մեյթիխանյան, Հայոց Լեզու 7, Եր. 2021
3. Եզեկյան Լ., Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, Հայոց լեզու, Եր. 2010
4. Մեյթիխանյան Փ. , Ուսուցչի ձեռնարկ, Եր. 2011
5. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր. 2009, ԵՊՀ հրատ.
6. Ջուհարյան Թ., Մեթոդական ուղեցույց, Եր. 1979
7. Ուսուցողական հղում- https://enlightngo.org/post/14901